

ՀՀ Կոտայքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

Երթուղու					
N/N ը/կ	Անվանումը և համարը	Սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավար ական կետ)	Վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան և երթակարգավարական կետ)	Տեսակը (ավտոբուսային, միկրոավտոբուսային)	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1	Աբովյան-Բյուրեղավան	ք. Աբովյան	ք. Բյուրեղավան	միկրոավտոբուսային	12

Մրցույթի մասնակցության պայմանները կտրամադրվեն մրցույթային փաթեթով:

Մրցույթը տեղի կունենա 2017թ. Հունիսի 6-ին ժամը 11.00-ին Աբովյանի ավտոկայանում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10.00-16.00 հետևյալ հասցեում ք. Հրազդան, Կենտրոն, մարզպետարանի շենք 2-րդ հարկ, քաղաքաշինության վարչություն: Հայտերի ընդունման վերջին ժամկետը 2017թ հունիսի 31-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել /0223/ 2-85-27 հեռախոսահամարով:

Մրցույթն անցկացվում է ՀՀ Կառավարության 2001 թ-ի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն: ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ց Ա Ն Կ

#### ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՃԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

- Հայտ.
- Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
- Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
- Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
- Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
- Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսների նախաաղբերային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակազմի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաաղբերային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
- Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:  
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Բսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Բսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը: